



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՄԱՐՄԱՐԱ»Ի ՓՈՒՆ ԽՏՐԱԳԻՐ ՕՐ. ՄԱՔՐՈՒՅԻ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Հինգշաբթի, 7  
Հոկտեմբերի կեսօրին,  
Թեմիս բարեխնամ  
Առաջնորդ Բարձր. Տ.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
ընդունեց այցելութիւնը  
Պոլսոյ «Մարմարա»  
օրաթերթի փոխ խմբագիր  
Օր. Մաքրուի Յակոբեանի,  
որ Լոս Անճելըս կը գտնուի  
այս օրերուն:

Յարգելի հիւրը, որուն  
կ'ընկերանար իր եղբայրը՝

Գեորգ, Առաջնորդ Սրբազանին հետ ունեցաւ երկարատեւ զրոյց մը,  
ընդհանուր տեղեկութիւններ տուաւ Պոլսոյ եւ ընդհանրապէս Թուրքիոյ  
հայութեան մասին, որոշ մանրամասնութիւններ հաղորդելով այն  
արարողութեանց ու յարակից զարգացումներուն մասին, որոնք տեղի  
ունեցան Սեպտեմբեր 19ին, Վանայ լիճի Աղթամար կղզիի Ս. Խաչ եկեղեցւոյ  
մէջ:

Առաջնորդ Սրբազանը իր կարգին ծանօթութիւններ տուաւ Ազգ.  
Առաջնորդարանի բազմաճիւղ աշխատանքներուն մասին: Նշենք, որ Օր.  
Յակոբեան առաջին անգամը չէ որ Ազգ. Առաջնորդարան կ'այցելէ, սակայն  
ասիկա առաջին այցն էր Առաջնորդարանի նոր շէնքի կառուցումէն ետք: Այս  
առիթով, ան նաեւ ծանօթացաւ շէնքի տարբեր բաժիններուն:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց  
յարգելի հիւրերուն:

### PRELATE WELCOMES CO-EDITOR OF MARMARA NEWSPAPER

On Thursday, October 7<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy co-editor of the Marmara

Newspaper in Istanbul, Ms. Makrouhi Hagopian, who was accompanied by her brother Kevork.

During their meeting, Ms. Hagopian gave her account on the situation of Armenians living in Turkey, and spoke of circumstances surrounding the celebration of Divine Liturgy at Holy Cross church of Akhtamar on September 19<sup>th</sup>.

The Prelate familiarized Ms. Hagopian with the vast endeavors of the Prelacy, and also with the various departments that serve within the Prelacy given that it was her first visit to the current headquarters.

The meeting concluded with the Prelate presenting the guests with mementos.